



ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Ի դարը եկեղեցական տեսակետից քննադատվում է էկումենիկ շարժումով, որի նպատակն է իրագործել տարբեր եկեղեցիների մերձեցումն ու միությունը: Այդ միությունը, սակայն, գերակայություն կամ ձուլում չի նշանակում: Այդպիսի նպատակը կանտեսներ ժողովուրդների ազգային առանձնահատկությունները, հետևաբար կխոչընդոտեր նույնիսկ մերձեցումը: Միությունը եկեղեցադրում է իրավահավասար համագոյակցություն գործունեության համաձայնեցված ծրագրով, որովհետև բոլոր եկեղեցիների նպատակը մեկ է՝ մարդուն ցույց տալ դեպի Աստված տանող ուղին:



Այսպիսի իրավահավասար, բայց և միանգամայն միասնական տրամադրությունների մասին է վկայում Մայր Աթոռում հրատարակված «Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի իններորդ ուղևորությունը» գիրքը<sup>1</sup>, որը արձագանքն է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի և Պողոս Զ Պապի հանդիպման:

Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա  
ՀԱՅՐԱՊԵՏԻ  
ԻՆՆԵՐՈՐԴ  
ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Հավատացյալ և հայրենասեր ընթերցողը ծանոթ է Հայրապետի Աստուծոյ ուղևորությունների նկարագրություններին: Այս մեկը, սակայն, որոշապես առանձնանում է մատուցողներից երկու հիմնական պատճառներով: Նախ, որովհետև այս գրքի բովանդակությունը՝ ուղևորության նպատակը, դուրս է գալիս զուտ հայկական շրջանակներից և երկրորդ, որովհետև այս գիրքը դեպքերի ու հանդիպումների սուկական նկարագրու-



Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին  
1971

<sup>1</sup> Գիրքը կազմել և խմբագրել են «Էջմիածին» ամսագրի խմբագիր Աթոռն Հատիսյանը և Մայր Աթոռի միջնկեղեցական հարաբերությունների ընդհանուր քարտուղար Պարզև Ծահրազյանը: Գեղարվեստական ձևավորումը՝ անվանի նկարիչ Գրիգոր Խանջյանի:

թյուն չէ, այլ առատ է խոհական և հուզական խորացումներով, մի հատկություն, որով գիրքը դառնում է ավելի կենդանի և շարժուն:

Նույնիսկ ոչ հայկական մամուլը Վեհափառ Հայրապետի և Պողոս Զ Պապի հանդիպումը որակեց պատմական: Իսկ պատ-

մական է այն դեպքը կամ իրադրությունը, որը բացառիկ է, դուրս է տվորականի սահմաններից: Այս հանդիպումը իսկապես բացառիկ է իր նշանակությամբ միջեկեղեցական, միջազգային, ինչպես նաև հայ ազգային կյանքի համար: Այս երեք մակարյակներում էլ հանդիպումը ունեցավ եզակի արձագանք: Այդ մասին գրեցին աշխարհի բազմաթիվ երկրներում տարբեր լեզուներով: Կազմակերպվեցին հարցազրույցներ: Մի խոսքով աշխարհը արձագանքեց այս իրադարձությանը, անշուշտ նրա մեջ գտնելով ինչ-որ կարևոր բան ընդհանրական եկեղեցու և ողջ մարդկության համար:

**Միջեկեղեցական տեսակետից** այս հանդիպումը ունեցավ ավելի մեծ իմաստ, քան մյուս մակարդակներում: Այս իմաստով երեվույթը բացառիկ էր նույնիսկ որպես փաստ, որպես երկու Հովվապետների աննախընթաց հանդիպում՝ բարձրագույն մակարդակի ընդունելությամբ: Երկու Վեհապետներն էլ գիտեին, որ քիչ տխուր դեպքեր չեն արձանագրվել երկու եկեղեցիների միջև, բայց այդ բոլորը համարելով պատմական որոշ հանգամանքների անդրադարձ, պատրաստակամություն հայտնեցին ուղի հարթելու դեպի եկեղեցիների միություն՝ ճշմարիտ քրիստոնեական ոգով: Վեհափառ Հայրապետը հայտարարեց. «Եկած է ժամանակը, որպեսզի բոլոր եկեղեցիները մոտենան իրարու և միասին աղոթեն, միասին ներշնչվին, մեկը մյուսով գորանա և միատեղ գործեն»<sup>2</sup>: Սա ավելի քան անհրաժեշտ է, որովհետև, ինչպես մի այլ տեղ ասում է Հայրապետը, մեր օրերի մարդկությունը, առավել քան երբեք, կարիք ունի քարոշական կարգապահության և ոգեկան հավասարակշռության, որին կոչված են նպաստել եկեղեցիները ընդհանուր ուժերով «աննահանջ սիրով մը մարդոց հանդեպ և խոր հավատքով և լավատեսությամբ դեպի մարդը և դեպի անոր բարիքն հանձնարը»<sup>3</sup>:

Պատմական հակադրություններն ու տխուր դեպքերը տեղի պետք է տան այս հրամայական պահանջի առաջ: Այս տրամադրությունը լավապես արտացոլվում է նաև Սրբազան Պապի խոսքերի մեջ. «Եթե ժամանակի դժբախտությունները, մեծ ջանքերով մշակված և աստիճանաբար ճշտված տերմիններ այլ լեզուներով թարգմանելու դժվարությունները, մեր հավատքի կենտրոնական խորհուրդն արտահայտելու ճանապարհին մեզ հանգեցրին որոշ տարակարծությունների, այժմ արդեն անհրաժեշտ է

վերաքննության ենթարկել այդ վարդապետական դժվարությունները, գիտակցե՞նք դրանք հարուցող պատճառները և ելքայրական ոգով հաղթահարել դրանք»<sup>4</sup>:

Երկու Հովվապետներն էլ կոչ են անու ավելի զգոն լինել ու վերանորոգված հավատարմությամբ պարտավորություններ ստանձնել արագացնելու համար այն օրերը կողմերը կկարողանային «միասնաբար մեծ հանդիսավորությամբ ամրապնդել եկեղեցիների միջև վերագտնված լիակատար միությունը»<sup>5</sup>: Այսօր ողջ մարդկությունը ձյգտում է ընդհանուր միասնության, խաղաղոյակցության, ընդարձակվում են փոխհարաբերությունները ամենախեղճ ժողովուրդների միջև, ուստի եկեղեցիները (նույնիսկ բոլոր կրոնները) պետք է ավելի սերս համագործակցեն հստակ ու համարձակ աշխատանքով: Վեհափառ Հայրապետի այցելությունը Հոռոմ Աջեց համագործակցության մի նոր հանգրվան, վեր՝ բոլոր տարակարծություններից ու անցյալի հակադրություններից, «որպեսզի մեր և բոլորի միջև տիրվ սիրո մեջ արտահայտված ճշմարիտ եղբայրությունը»<sup>6</sup>:

Այդ բանը անհրաժեշտ է նույն ինքն եկեղեցու հեղինակության համար, որովհետև ժամանակակից աշխարհը, որը, ինչպես կարդինալ Ժան Վիլլբրանդան է ասում, «ավելի կարևորություն է տալիս գործերին քան խոսքերին», չի ընդունի աստվածային սիրո խորհուրդի պատգամը, եթե եկեղեցին այն թերահավատ աշխարհին ներկայանա որպես իրար հակադրված և իրարից բաժանված եղբայրներ:

Ի միջի այլոց, Վեհափառ Հայրապետը պատեղ շատ անհրաժեշտ վերապահում է կատարում, որը ցույց է տալիս Նրա մեծ շահագրգռվածությունը ժողովրդի, նրա կյանքի ու ցանկությունների նկատմամբ. «Եկեղեցիներու միությունը կարելի չէ իրականացնել լոկ եկեղեցիներու ղեկավարներու ցանկությամբ»<sup>7</sup>: Անհրաժեշտ է հաշվի առնել ժողովրդի ցանկությունը, չհակադրվել ժողովրդի պատմական անցյալին ու ապագային, հակառակ դեպքում ժողովուրդը չի հետևելի իր հովիվին: Բայց, ընդգծում է Հայրապետը, «Մենք ապագայի նկատմամբ լավատես ենք: Այդ է հիմնական պատճառը որ կգտնվինք այստեղ, Չեր մեջ»:

Անհրաժեշտ է ուրեմն, որ եկեղեցիները ապրեն լիակատար հաղորդության և ներդաճակության մեջ, իսկ այդ ճանապարհին

<sup>2</sup> «Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետի իններորդ ուղևորությունը», էջ 18:  
<sup>3</sup> Աճղ, էջ 28:

<sup>4</sup> Աճղ, էջ 28:  
<sup>5</sup> Աճղ, էջ 28:  
<sup>6</sup> Աճղ, էջ 27:  
<sup>7</sup> Աճղ, էջ 36:

նախաձեռնող մեծ իրադարձություն էր երկու Աեհապետների ողջագործումը:

Մեծ է հանդիպման միջազգային նշանակությունը:

Մարդկությունը Ի դարում ապրում է իր զարգացման ամենաբուռն ժամանակաշրջանը: Գիտական նվաճումները մարդու վայն հնարավորություններ ընձեռնեցին խուսափելու բնության տարերային ենթակայությունից: Այսօր մարդը տեղեկություն է ստանում աշխարհի ամենահեռավոր անկյուններում կատարվող դեպքերի մասին: Բայց և... մարդկությունը Ի դարում ապրեց իր պատմության ամենամեծ ողբերգությունները՝ Համաշխարհային առաջին և երկրորդ պատերազմները: Անկախ պատերազմի կողմնակի հաղթողից, մարդկությունն ականատես եղավ այնպիսի աղետների, ցեղասպանության, որի հիշատակումն անգամ փշաքաղում է նոր սերունդների խիղճը: Մարդը սարսափեց պատերազմից, հատկապես միջուկային զրահավորման ժամանակակից շրջանում: Ուստի մարդու ճակատագրի համար ցավող յուրաքանչյուր անհատ կամ ժողովուրդ ստիպված է մտածել ու պայքարել այդ աղետից խուսափելու համար: Եկեղեցին կարող է անտարբեր լինել: Անշուշտ ոչ: Հակառակ դեպքում նա կհակասի իր իսկ գոյությանը:

Այս փաստը գիտակցելով է, որ երկու Հովվապետներն էլ առանձնապես ընդգծեցին համաշխարհային խաղաղության անհրաժեշտությունը: «Մեր ժամանակի մարդիկ,—ասում է կարդինալ ժան Վիլլբրանդը իր ճառում,—աշխատում են կառուցել վախճանի մի աշխարհ՝ ավելի արդար և ավելի մարդկային»<sup>8</sup>: Իսկ դա հնարավոր է առանց խաղաղության: Պատերազմով «լավագույն աշխարհ» կկառուցես: Իսկ մեր ժողովուրդը իր մարմնի վրա զգաց ամենադառն հարվածը: Պատահական չէ, որ Վեհափառ Հայրապետը առանձին կակիծով է կոչ անում, «...որ ավելի զորանա պատերազմի կրակը մարելու մեր պարտականության զգացումը, որ մենք՝ եկեղեցիներու՝ ղեկավարներս, առավել նպատակալաց կերպով աշխատինք ցույց տալու բոլոր ազգություններուն և պետություններուն՝ միասնության, եղբայրության և խաղաղ գործակցության ուղիները: Այլևս անհնար է, որ մարդիկ և մենք՝ հոգևորականներս, հաշտվինք պատերազմի գաղափարի հետ»<sup>9</sup>: Անհրաժեշտ է, որ բոլոր եկեղեցիները խնամրհույանք և հավատարմությանք հավաքվեն երկնային Վարդապետի շուրջ, որպեսզի

կարողանան միացյալ աղոթքով և աշխատանքով «հողմերն ու ծովերը» հնազանդեցնել, որպեսզի փոթորիկները դադարեն և «լիցի խաղաղություն մեծ»: Քրիստոսն է մեծ խաղաղությունը, մարդու երջանկությունը: Ողջագործման իմաստը այդ երջանկությունը մարդուն պարզելու մեջ էր. «Սա է այն նպատը (ժողովուրդների եղբայրացումը—Ե. Մ.), որ մենք պետք է բերենք բոլոր մարդկանց և բոլոր ազգերի միջև խաղաղություն հաստատելու գործին»<sup>10</sup>:

Ինչքան անկեղծ և սրտառուչ է Վեհափառ Հայրապետի աղոթքը.

«Հայր մեր որ յերկինս ես, Ես՝ Վազգեն ծառա Քրիստոսի և հայ ժողովուրդին, ծունկի եկած այստեղ, Քու փառքիդ համար բարձրացված այս սուրբ տաճարին մեջ, աղոթք կկարդամ առ Քեզ՝ Արարիչ և Փրկիչ մեր, որ անբավ ողորմությանք օգնության հասնիս աշխարհի վրա շնչող բոլոր մարդկանց անխտիր, որպեսզի անոնք կարողանան վերջնապես փակել մարդկության արյունոտ պատմության գիրքը և ուշումնել լուսաբացը տեսական խաղաղության ժամանակաշրջանի մը, մարդոց և ազգություններու եղբայրացումով»<sup>11</sup>:

Երկու Հովվապետները միաձույլ և հեղինակավոր ձայնով կոչ արեցին բոլոր նրանց, ովքեր դեր են խաղում կամ ազդեցություն ունեն ազգերի ու ժողովուրդների կյանքում, հրավիրելով ջանք չխնայել փնտրելու և գրանելու բոլոր հնարավոր միջոցները պատերազմներին, ստեղծությանը, ֆիզիկական և քարոչական բռնությանը, մարդու կողմից մարդու ճնշմանը վերջ տալու համար:

Դժվար չէ պատկերացնել, թե միջազգային մակարդակով այսքան վառ հետաքրքրություն ներկայացնող հանդիպումը ինչքան մեծ նշանակություն կունենար հայ-ազգային տեսակետից:

Եվ իրոք: Բավական է ասել, որ բոլոր տեղերում Վազգեն Ա կաթողիկոսը, ընդունվելով որպես Ամենայն Հայոց կաթողիկոս, խորհրդանշան դարձավ հայ ժողովրդի միասնությանը: Հայ ժողովուրդը Նրա մեջ ընդունվեց կուսակցական ու համայնքային նեղ սահմաններից անկախ ու վեր: Նրա մեջ գնահատվեց հայ ժողովուրդը իր «քարից հաց քամող» ձեռքով ու մտքի հանճարով: «Այն պատիվները որ եղան Մեզի այս օրերուն, Մենք Մեր անձին չենք վերագրեր, այլ հնադարյան մեր եկեղեցիին և առավել հնադարյան մեր հայոց ազգին», ընդգծում է Վեհափառը:

<sup>8</sup> Անդ, էջ 34:  
<sup>9</sup> Անդ, էջ 24:

<sup>10</sup> Անդ, էջ 27:  
<sup>11</sup> Անդ, էջ 25:

Հայ եկեղեցին ամենաընդարձակ ճանաչում գտավ. թեկուզ միայն այն փաստով, որ Պողոս Զ Պապը Հայոց Հայրապետին հանձնեց մեր եկեղեցու հիմնադիր և հարթողի մետա առաքյալի մատուցը: Սրբազան Պապը հայտարարեց. «...Ոգնելույն էինք հիշատակն այն մեծ սրբերի, որոնք Ավետարանի լույսը բերեցին ձեր ազնիվ ժողովրդին, ինչպես նաև հիշատակը նրանց, որոնք փորձություններով լի ժամանակաշրջանում օգնեցին նրան կանգուն մնալու և վերստին համախմբվելու քրիստոնեական այն հավատի շուրջը, որով մեծապես ներթափանցված է ձեր մշակույթը, և որը աղբյուրն է հանդիսանում այն աննահանջ խիզախության, որի ապացույցը տվել է հայ ազգը բազում անգամներ»<sup>12</sup>:

Մեր ժողովրդի քաջության և խիզախության մասին արտահայտվեցին բոլոր այն պաշտոնական անձինք, որոնց հետ հանդիպում ունեցավ Հայոց Հայրապետը, ընդհուպ մինչև Ֆրանսիայի պրեզիդենտը, որը Վեհափառին խնդրում է, որ Ֆրանսիայում ապրող հայերին հաղորդի, թե «ֆրանսական իշխանությունները շատ գոհ են այս երկրի մեջ ապրող հայ տարրեն, այս երկրի տնտեսական, մշակութային հառաջդիմության ամուրց բերած նպաստին և ֆրանսական հայրենիքի նկատմամբ ունեցած հավատարմության մեջ»<sup>13</sup>: Մեր ժողովրդի մասին այսպիսի անկեղծ ու բարձր կարծիքը չէր կարող չտրախացնել հայրենիքի և նրա սահմաններից դուրս գտնվող հայության սիրտը: 2Է՝ որ սա նշանակում էր պետական-քաղաքացիական բարեհաճ վերաբերմունք հայ համայնքի նկատմամբ: Ավելին: Բոլոր դեկլարաները գոհ են իրենց իշխանության սահմաններում գտնվող հայերի աշխատասիրությունից ու կարգապահությունից: Ահա թե ինչ է առում Ալֆորվիլի քաղաքագույս, Վալ-դը-Մառնի գլխավոր խորհրդական Ժոզեֆ Ֆրանչեսկին. «Ամբողջապես ներգրավված այս փոքրիկ քաղաքի կյանքի աշխույժ ոլորտի մեջ, պահպանելով հանդերձ իրենց ազգային ինքնուրույնությունը, նրանք (հայերը—Ե. Մ.) ամենակատարյալ օրինակն են տալիս այն բանի, թե ինչպիսին կարող է լինել ամբողջական և քացարձակ անկեղծության մեջ բաժանված սերը. այսօր մենք չգիտենք՝ Ալֆորվիլն է պատկանում հայերին, թե հայերը՝ Ալֆորվիլին»<sup>14</sup>: Այստեղ արդեն Վեհափառ Հայրապետի սիրտն է խինդով լցվում, և Նա քաջալերում է իր զավակներին գոտեպնդվել, մեռակ ու որբ

չգզալ օտարության մեջ, չօտարանալ. լինելով հանդերձ իրենց երկրի կարգապահ բարաքացին, լինել իրենց ժողովրդի հարազատ զավակը: Էկոմենիկ աղոթքների և պաշտոնական ճաշկերույթների ժամանակ հոգևոր և աշխարհական անձերի արտասանած խոսքերը դառնում են մեր ժողովրդի քրիստոնեական կայուն հավատքն ու բարձր մշակույթը վերհանող վկայություններ: Մոնակոյի եպիսկոպոս Ժան Ռյուպլեյն իր խոսքում առում է. «Այս մեծ ժողովուրդը, որ ունի այնքան բարձր և ինքնատիպ մշակույթ, Արևմուտքում տեսապես պետք է է՛լ ավելի լավ ճանաչվի: Ահա արդեն 25 դար է, որ նա իր տեղն ունի պատմության մեջ: Հույներն ու հռոմեացիները լավ են ճանաչել այս ժողովրդին, հարգել են նրան, գիտակցել նրա արժեքը՝ նրա դեմ կուլելու կամ նրան իրենց դաշակելից դարձնելու համար: Ծատ շուտով հայտնի դարձան նրա մշակույթի հարստությունն ու մեծությունը, ինչպես նաև կորույնն ու արհուրությունը»: Հուլիվը ուրախանում է և նրանով, որ իր հոտի մեջ տիրում է փոխադարձ սիրո և եղբայրության մթնոլորտ, որը նրա գոյատևման նախապայմանն է: Եվ դեռ. «Դուք ևս զձեզ առանձին չգզաք: Դուք համբավեք թիչ եք, բայց դուք ձեր թիվին մի՛ նայիք, դիտեցեք ձեզ՝ միացած Հայաստանի ժողովուրդին հետ»<sup>15</sup>:

Ահա սա է այն մեծագույն նպաստը, որ Վեհափառ Հայրապետը իր ներկայությամբ բերեց գաղութահայությանը: Հառնող ու վեր պացող Հայաստանի խորհրդանիշն է Հայոց Հայրապետը, և սփյուռքահայությունը ավելի հաստատուն հողի վրա կկանգնի միայն ու միայն այդ պացքին առընթեր և երբեք՝ նրանից անկախ:

Ս. Ղազարի վանքում Վեհափառը ապրում է իր կյանքի ամենահուզախառն պահերից մեկը նոր ձեռագրատան քացման առթիվ. «Իրոք, հրաշքի համազոր երևույթ է փրկությունը այս սուրբ նշխարներուն՝ մեր ձեռագիրներուն»: Եվ Հայրապետը ձեռագրատանն է նվիրում ս. Գեղարդ վանքից բերված նրբակերտ մի խաչքար, որպես հայրենի վկան այդ սուրբ նշխարների:

Կարծես ողջ հայության ձայնն է, որ արձագանքվում է գրող Հրաչ Զարդարյանի խոսքերի մեջ. «Հայ ժողովուրդը կփարի մուլեզներեն, զոհաբերումի մեծ ոգիով իր Հայրապետին: Այսպիսի անսահման սեր ներշնչած են իրենց ժողովուրդին Ներսես Առտարակեցի մը, Խրիմյան Հայրիկ մը, Իզմիրյան պատրիարքը, Վազգեն Ա...»<sup>16</sup>: Ավելի լավ գնահատական Վեհափառ Հայրա-

<sup>12</sup> Աճ, էջ 25:  
<sup>13</sup> Աճ, էջ 184:  
<sup>14</sup> Աճ, էջ 244:

<sup>15</sup> Աճ, էջ 48:  
<sup>16</sup> Աճ, էջ 228:

պետի գործունեության դժվար է գտնել: Վազգեն Ա կաթողիկոսը մեր ժողովրդի համար արդեն կոթողացած հավերժություն է:

Բավական է թերթել գիրքը՝ պատկերացնելու համար այն դժվարությունները, որոնք կապված են այսպիսի հատորի կազմության հետ: Վեհափառի ուղևորությունը երկարում է Հոռմից Վենետիկ, Միլան, Փարիզ, Լիոն, Մարսել, Մոնակո, Լիսաբոն, նորից Փարիզ և վերջապես Մոսկվա ու Մայր Աթոռ: Ամեն տեղ պաշտոնական այցելություններ, ճառերի փոխանակում,՝ աշխարհային, հանդիպումներ ազգային-եկեղեցական միությունների հետ, խոսքեր, հարցազրույցներ: Ծատ հաճախ ստիպված ես լսողություն դառնալ՝ գրանցելու համար օտար լեզուներով կարդացված ճառերը, գիշերները թարգմանել, խմբագրել, օրը օրին անհրաժեշտ հաղորդագրություններ հասցնելու սիյուրքի հայկական թերթերին: Գրքի գեղարվեստական ձևավորումը, որը կատարել է անվանի նկարիչ Գրիգոր Խանջյանը մեծ սիրով, գեղեցիկ է և տպավորիչ: հատկապես արտահայտիչ են գլխազարդերն ու վերջնազարդերը, որոնք հաջողապես բացահայտում են գրքի բովանդակությունը: Չմոռանանք, որ այս գրքի գրեթե յուրաքանչյուր երրորդ էջի վրա լուսանկար է՝ գիրքն ավելի խոսուն դարձնելու համար: Ծնորհալի լուսանկարիչ Հարություն Գալուզի որոշ նկարներ գեղարվեստական

արժեքի բարձրացած նկարներ են, իսկ զլխապտույտ առաջացնող ժամանակագրությունը՝ օր առ օր, փաստ առ փաստ: Ի պատիվ գիրքը կազմողների, պետք է ասել, որ այս հարցը լավագույնս լուծվել է, հաճախ ժամերի հաջորդականությամբ:

Այս գիրքը առանձնանում է նաև իր վեհո հայերենով: Երբեմն պատկերավոր մտածողությունը գեղարվեստական երանգ է ստանում: Ահա մի օրինակ. «Պատմական այս տաճարի կամարների տակ դաշն ու վեհաքանչ թնդում է հայկական հոգեպարար շարականների քաղցրալուր մեղեդին», կամ. «հոգեզմայլ սաղմոսերգությունների և կրոնարույր մեղեդիների վեհ ու հոգեպարավ հնչյունների տակ»:

Եթե այս բոլորին գումարենք և այն, որ կազմողները երբեմն խորունկ խորհրդածություններով վերլուծում են ուղևորության մեծ նշանակությունը միջեկեղեցական, հատկապես հայ կյանքի համար, ապա գրքի առավելությունները կուռճանան այնքան, որ հատուկենտ վրիպումներ կմնան գրքի արժանիքների ստվերի տակ:

Ընթերցողի սեղանին է հարուստ բովանդակությամբ, գեղեցիկ հորինվածքով և մաքուր հայերենով գրված օրինակելի մի գիրք, որը կհարստացնի ընթերցողի և՛ իմացական, և՛ հոգեկան աշխարհը:

Ե. ՄԵԼՔՈՆՅԱՆ

